36. ՉԱԼԿԻԼԻ ՔՅԵՖ

Ժամանակով մարթըմ կէրթա̈ Ըսթամբոլ: Քյանի մը փարի կպանի, էրկու խարիր ոսկի փարա կվաստկի:

Կասի. - Խերիքյ ի, էրթամ Վան էրկու խարիր ոսկին էլ խերիքյ ի:

Ուր պետք էլա̈ծ բիթյուն կառնի, որ պիտի էրթա̈ մտնի գյա̈մին, ինքյ-ինքյ կասի. «Էսա կա̈դար փարի Ըսթամբոլ մնայի, մեյ խատ քյարխանա չկնույի, մեյ խատ էրթամ քյարխանեն, խենքյ ինչխ ի, կէրթա̈մ երկիր ասիմ»:

Կփառնա, կէրթա̈ մեյ խատ կնիյ կկընդնի, կնգյան խաբար կթալի: Կնիյ կւսբյուլ կանի, կասի. - Արի ներս:

Կտանի էօդեն: Էօդի մեչ կնստին կփիսնա, որ փողնի պոտ կթըփեն:

Մարթն կնգյան կխառցույի. - Էսա վո՞վ ի, պոտ թըփեյ:

Կնիյ կասի. - Իմ իրիկն ի:

Մարթն կասի. - Ես ի՞նչխ անեմ ապա:

Կնիյ կասի. - Էլի՛ մտի մուսանդարեն:

Մարթ կմտնի մուսա̈նդարեն, կնիկն մուսա̈նդարի պոտ կկոծի, կէրթա̈ փողնի պոռ կպանա, կփիսնա, որ իրիկն ի: Իրիկ կուգյաւ ներս:

Կնիյ կասի. - Մա՛րթ, էսօր ես շատ խիվանդ եմ, կնա̈ չալկիմ պե, թոզ գանի, բալքյի իմ սիրտ քիչըմ պայվի:

Ըսթամբոլա մարթերայ զըմբուլ կիյթերայ ծեռն ի, մարթն չարահատ կնայ չալկին իպե:

Կնիկ կպիրի չալկին կտնի էօդի մաբեն, էօդի պոտ կշինի, մարթն մուսա̈նդարից կխանի տյուս, կքյա̈շի վեր ուր, կասի. «Դե՛, չալկիով քյո քեֆն արա»:

Հա̈ր ինչխ կանի, կնիյ մարթու մեչքից քյա̈մարն կառցկի, մարթըն չիմնա:

Սորա կնիկ չալկին էլ կճամխի, մարթն էլ կճամխի: Մարթըն կէրթա չյուր գյա̈մին, պա̈ մԷլ կինի միտք որ առնի երկրի խամար, կուգյաւ շուկեն առնելու, ծեռ կուտա մեչք, կփիսնա որ քյամրով փարեն չկա:

Վազեվազ կէրթա մոտ կնիկ, որ փարեն եփ առնի, կնիկ սիյթիր կանի, կասի. - Կնա՛, խաբար չեմ:

Մարթ եփ կփառնա, էսփեղ կփնդռի, էն դեղ կփնդռի, փարեն չկընդնի: Շափ կմփածի խելքյն կթալի: Գյախ կուլա, գյախ կծծղա:

Ուրիշ մարթըմ կփիսնա, որ էսա մարթ գյախըմ կուլա, գյախըմ կծծղա, ինքյ-ինքյ կասի. «Էսա մարթուն ի՞նչ ի ուրփի, գյախ կուլա, գյախ կծծղա, առաճ խելայի էր»:

Մարթըն կէրթա կխառյուցի, կասի. - Ախպեր, պարև քյե:

Մարթըն կասի. - Աստւ պարին:

- Քյե ի՞նչ ուրփե, ի՞նչ էլի, գյախ կուլաս, գյախ կծծղաս:

Մարթ ուր գյլխու գյայած կպափմի, կասի. - Որ էն կնկյա խեփ արած չալկիով քյեֆն կինի միփս՝ ծաղրս կուգյա, որ իմ քյամարի մեչի փարեն կինի միփս՝ լացս կուգյա: